Հայաստանի Հանրապետությանն անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 2020 թվականի բյուջետային հայտի բացատրագիր

Ընդամենը ծախսեր

Աշխատավարձի ֆոնդ

Կոմիտեի համակարգում հաստիքային աշխատակիցների ամսական աշխատավարձի ֆոնդը կազմում է 148’395.742 հազ.դրամ, որից քաղաքացիական ծառայողներինը՝ 106’930.160 հազ.դրամ, այլ պաշտոններինը՝ 41’465.582 հազ.դրամ:

Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը՝ քաղաքացիական ծառայողներինի աշխատավարձի ֆոնդը՝ 106’930.160x13.13+(106’930.160x12+106’930.160x4)/12=1’546’566.546 հազ.դրամ, այլ պաշտոնների՝ 4’282.565x13.13+(4’282.565x12+4’282.565x4)/12+57’749.250x13.13=820’187.818 հազ.դրամ:

Ընդամենը աշխատավարձի ֆոնդը կազմում է 2’366’755.0 հազ. դրամ:

Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ

Կոմիտեի համակարգում հաստիքային աշխատակիցների **պարգևատրման ֆոնդը** կազմում է՝ 2,366,755.0x 30%= 710,026.0 հազ.դրամ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 5-րդ մասի սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդամենը պարգևատրման ֆոնդը կազմում է 710’026.0 հազ. դրամ:

Քաղաքացիական ծառայողների պարգևատրում

Կոմիտեի համակարգում քաղաքացիական ծառայողների **պարգևատրման ֆոնդը** կազմում է 1,583,370.483x10%=158,337.0 հազ.դրամ:

Ընդամենը քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդը կազմում է 158’337.0 հազ.դրամ:

Էներգետիկ ծառայություններ

ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի թիվ 629-Ն որոշմամբ նախատեսված նորմաների համաձայն Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համակարգի գործունեության իրականացման համար **էներգետիկ ծառայությունների գումարը կազմում է՝** *էլեկտրաէներգիայի* – 57’965.0 հազ.դրամ, *ջեռուցման և վառելիքի* – 33’035.0 հազ.դրամ, **ընդամենը – 91’000.0 հազ.դրամ:**

<u>Կոմունալ ծառայություններ</u>

Ջրամատակարարման և* ջրահեռացման *ծախսեր

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համակարգի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հաշվարկը կատարվել է ըստ նորմատիվի՝ 1 աշխատողին տարեկան 8 խոր. լիտր ջուր/1018x8x191.414=1,558.9 հազ.դրամ/: Ընդամենը համակարգի կողմից օգտագործվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների վարձը կկազմի՝ 1’558.9 հազ.դրամ:

Դեռատիզացիայի ծախսեր

Դեռատիզացիայի ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով կնքված պայմանագրերը՝ ընդամենը ծախսերը կկազմեն 500 հազ.դրամ:

Ընդամենը կոմունալ ծառայությունների գումարը կազմում է 2’058.9 հազ.դրամ:

<u>Կապի ծառայությունների վճար</u>

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համակարգի կապի ծառայության ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1956-Ն որոշման պահանջների համաձայն՝ գումարը կազմում է **ընդամենը 18’000.0** հազ.դրամ:

<u>Ապահովագրական ծախսեր</u>

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համակարգի 33 ծառայողական մեքենաների ապահովագրական ծախսերի համար անհրաժեշտ է **1’700.0** հազ.դրամ:

<u>Գույքի և սարքավորումների վարձակալության ծախսեր</u>

Շենքերի շինությունների վարձակալության ծախսերը նախատեսված են համաձայն սպասարկման գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների կողմից կնքված տարածքների վարձակալության պայմանագրերի՝ գումարը կազմում է **50’894.8** հազ.դրամ:

<u>Արտագերատեսչական ծախսեր</u>

Կոմիտեի համակարգի տարածքային ստորաբաժանումներում և սպասարկման գրասենյակներում/կադաստրային ինֆորմացիայի, գույքի և սարքավորումների պահպանման համար/ պահպանության պայմանագրերի գումարը կազմում է **ընդամենը՝ 13’420.0** հազ. դրամ:

<u>Գործուղման ծախսեր</u>

2020թ.-ին պլանավորվում է հանրապետությունից դուրս 12 գործուղում՝ 3-6 օր տևողությամբ: Յուրաքանչյուր գործուղման նախատեսվում է ուղարկել 1-3 աշխատակից:

Նախատեսվում են գործուղումներ հետևյալ երկրներ՝

Միացյալ Թագավորություն, Նորվեգիա, Չինաստան, Նիդերլանդներ, Շվեյցարիա, Բելգիա, ԱՄՆ, Ղազախստան, Լիտվա, Ճապոնիա, Ֆինլանդիա և Ավստրիա:

Հանրապետությունից դուրս գործուղման ծախսերը կատարվում են հետևյալ ուղղություններով՝ ճանապարհածախս, օրապահիկ, գիշերավարձ, ներքին տրանսպորտ:

Միացյալ Թագավորություն – 5 օր մեկ անձ

օրապահիկ	146x5x1 = 748$
գիշերավարձ	239x4x1 =956 $
ներքին տրանսպորտ	100x1 = 100$
ճանապարհածախս	500x1 = 500$
ընդամենը	1904$

Նորվեգիա - 4 օր երեք անձ համար

օրապահիկ	193x4x3 = 2316$
գիշերավարձ	193x3x3 =1737 $
ներքին տրանսպորտ	100x3 = 300$
ճանապարհածախս	500x3 = 1500$
ընդամենը	5853$

Չինաստան – 5 օր մեկ անձ համար

օրապահիկ	119x5x1 = 595$
գիշերավարձ	123x4x1 =492$
ներքին տրանսպորտ	100x1 = 100$
ճանապարհածախս	750x1 = 100$
ընդամենը	1937$

Նիդերլանդներ - 4 օր երեք անձ

օրապահիկ	140x4x3 = 1680$
գիշերավարձ	158x3x3 = 1422$
ներքին տրանսպորտ	100x3 = 300$
ճանապարհածախս	500x3 = 1500$
ընդամենը	4902$

Շվեյցարիա - 4 օր երկու անձ

օրապահիկ	210x4x2 = 1680$
գիշերավարձ	257x3x2 = 1542 $
ներքին տրանսպորտ	100x2 = 200$
ճանապարհածախս	600x2 = 1200$
ընդամենը	4622$

Բելգիա - 3 օր մեկ անձ

օրապահիկ	117x3x1= 351$
գիշերավարձ	192x2= 384$
ներքին տրանսպորտ	100x1= 100$
ճանապարհածախս	500x1= 500$
ընդամենը	951$

ԱՄՆ - 6 օր երկու անձ

օրապահիկ	129x6x2= 1548$
գիշերավարձ	249x5x2= 2490$
ներքին տրանսպորտ	100x2= 200$
ճանապարհածախս	1000x2= 2000$
ընդամենը	6238$

Ղազախստան - 3 օր երկու անձ

օրապահիկ	131x3x2= 786$
գիշերավարձ	161x2x2= 644$
ներքին տրանսպորտ	100x2= 200$
ճանապարհածախս	500x2= 1000$
ընդամենը	2630$

Լիտվա - 3 օր մեկ անձ

օրապահիկ	108x3x1= 324$
գիշերավարձ	177x2x1= 354$
ներքին տրանսպորտ	100x1= 100$
ճանապարհածախս	430x1= 430$
ընդամենը	1208$

Ֆինլանդիա - 3 օր երկու անձ

օրապահիկ	82x3x2= 492$
գիշերավարձ	167x2x2= 668$
ներքին տրանսպորտ	100x2= 200$
ճանապարհածախս	550x2= 1100$
ընդամենը	2460$

Ավստրիա - 3 օր երկու անձ

օրապահիկ	112x3x2= 672$
գիշերավարձ	104x2x2= 416$
ներքին տրանսպորտ	100x2= 200$

ճանապարհածախս	400x2= 800$
ընդամենը	2088$

Ճապոնիա - 6 օր երեք անձ

օրապահիկ	166x6x3= 2988$
գիշերավարձ	220x5x3= 3300$
ներքին տրանսպորտ	300x3= 300$
ճանապարհածախս	700x3= 2100$
ընդամենը	8688$

Միջին ծախսը կազմում է 43’481$
43.481$ x 487 դրամ = 21’175’247 դրամ:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը **կազմում են 25’000.0 հազ.դրամ:**

Ներքին գործուղումների գծով՝ **10’000.0 հազ.դրամ:**

Ընդամենը գործուղման ծախսերը կազմում են 35’000.0 հազ.դրամ:

<u>Վարչական ծառայություններ</u>

Պատճենահանման, թարգմանչական, գործավարական և այլ վարչական ծառայություններ համար նախատեսվում է **ընդամենը 500.0 հազ.դրամ**:

<u>Տեղեկատվական ծառայություններ</u>

Նախատեսվում է կատարել հասարակության իրազեկման ծառայությունների իրականացում (բուկլետների տպագրում, թերթերի, ամսագրերի բաժանորդագրություն, թերթերում և այլ ԶԼՄ-ներուն հայտարարությունների հրատարակում, գովազդ, տպագրություն)՝ **ընդամենը 19’000.0 հազ.դրամ**:

<u>Ներկայացուցչական ծախսեր</u>

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն համագործակցում է մի շարք երկրների և միջազգային կազմակերպությունների հետ, որի համար նախատեսվել է **5’000.0 հազ.դրամ**:

<u>Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ</u>

Տարածքային ստորաբաժանումներում ազդարարական, հակահրդեհային անվտանգության, թվային տեսահսկման համակարգերի տեղադրման, տեսահսկման համակարգերի սպասարկման և այլ ծառայությունների համար նախատեսվում է **28’000.0 հազ.դրամ**:

<u>Մասնագիտական ծառայություններ</u>

Կոմիտեի գերատեսչական ցանցի սպասարկման, գլխավոր սերվերի ծրագրային ապահովման և այլ մասնագիտական ծառայությունների իրականացման, ինչպես նաև ՀՀ

համայնքների գյուղատնտեսական հողերի կադաստրային գնահատման աշխատանքների ծախսերը կազմում են **582’107.9 հազ.դրամ**:

<u>Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման, պահպանման ծախսեր</u>

Նախատեսվում է կատարել կոմիտեի վարչական տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ **35’000.0 հազ.դրամ**:

<u>Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման ծախսեր</u>

Նախատեսվում է կատարել ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ ավտոմեքենաների 8’000.0 հազ.դրամ, համակարգչային տպիչ, պատճենահանման և այլ սարքավորումների, օդորակիչների սպասարկման և սերվերային սարքավորումների սպասարկման համար՝ 35’000.0 հազ.դրամ, **<u>ընդամենը՝</u> 43’000.0 հազ.դրամ**:

<u>Գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռք բերման ծախսերը</u>

Նախատեսվում է ձեռք բերել թուղթ, տոներ, քարթրիջ, թմբուկ, գրենական պիտույքներ՝ **35’000.0 հազ.դրամ**:

<u>Տրանսպորտային ծախսեր</u>

Կոմիտեի համակարգում հաշվառված 33 ծառայողական մեքենաների համար նախատեսվում է ձեռք բերել բենզին, յուղեր, ավտոդողեր, այլ նյութեր:

<u>Ընդամենը</u> ծախսը կազմում է **20’000.0 հազ.դրամ**:

<u>Կենցաղային և հանրային սննդի նյութեր</u>

Տնտեսական ապրանքներ, մաքրիչ, սանհիգիենիկ և այլ նյութեր ձեռքբերելու համար նախատեսվել է **10’000.0 հազ.դրամ**:

<u>Պարտադիր վճարներ և տույժեր</u>

Միասնական տեղեկանքի, գույքի նկատմամբ իրվունքների պետական գրանցման, պարտադիր վճարների, տուքերի, տեխզննման, բնապահպանության, աղբահանության համար նախատեսված է **5’342.1 հազ.դրամ:**

<u>Դատարանների կողմից նշանակված տույժերի և տուգանքների գծով</u> նախատեսված է **5’000.0 հազ.դրամ**:

<u>Վարչական սարքավորումների ձեռք բերում</u>

Նախատեսվում է ձեռք բերել սերվերի ռեզերվային համակարգ, համակարգչային տեխնիկա և այլ սարքավորումներ /տպիչներ, պատճենահանման մեքենաներ, սկաներներ,

տեսաներածման սարքավորումներ և այլն/, օդորակիչներ, կենցաղային տեխնիկա, գրասենյակային գույք՝ **450’000.0 հազ.դրամ**:

<u>Ոչ նյութական հիմնական միջոցներ</u>

Նախատեսվում է ձեռք բերել 3 ծրագրային փաթեթ՝ **100’000.0 հազ.դրամ**:

<u>Գեոդեզիական բարտեզագրական ծախսեր</u>

Նախատեսվում է գեոդեզիական աշխատանքների իրականացում (Ծրագրերը կցվում են)՝ **380’770.3 հազ.դրամ**:

<u>Նախագծահետազոտական ծախսեր</u>

Նախատեսվում է շենքերի նորոգման և արխիվային տարածքի շինարարական աշխատանքների կատարման համար ձեռք բերել նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթներ՝ **34’088.0 հազ.դրամ**: